

ՄԱՐ ԱՐԱՍՅԱՆ ԱՂԱՅՈՒՐԻ ԾԱԳՈՒՄԸ
ԵՎ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՆԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Մ. Ս. ՈՇԱՆՅԱՆ

Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» միջնամասը՝ Վաղարշակից մինչև Վաղարշ, ամենախառնաշփոթ, ամենահակասական, ամենաանընդունելի հատվածն է նրա պատմության մեջ: Իրենց ճիշտ ժամանակներից հարյուրամոր տարիներով շրջված են պատմական իրադարձություններն ու դեմքերը: Շատ թերի, միախառնված ու իրենց ժամանակներից չափազանց շեղված են ներկայացված Երվանդունյան, Արտաշիսյան և հայ Արշակունյաց արքայատոհմերը: Պատմական շատ իրադարձություններ չփոթված և ոչ ճիշտ «տեղերի» են վերադրված: Պատմական մեկ անձնավորությանը վերադրված են տարբեր ժամանակներում հանդես եկած մի քանի անձների դրոշմեր և այլն: Որոշնք են այս չափազանց մեծ շեղումների ու շփոթությունների պատճառները:

Հայտնի է, որ Պարթև Արշակունիները իրենց հռչակել են Աքեմենյանների հետնորդներ և իրենց վերադարձը նրանց պատմությունը, ժառանգել նրանց թագաթյան ժառանգությունը արտաքին ու ներքին հարցերում: Աքեմենյաններին նմանակվելու Պարթև Արշակունիների վարած այս քաղաքականությունը մեծ շփոթությունների մեջ է դրել հետագա հայ և օտար պատմիչներին, այդ թվում՝ Մովսես Խորենացուն և դարձել նրա թույլ տված շփոթությունների հիմնական պատճառը: «Աքեմեն-Պարթևական» այս մեծ շփոթության ազդեցությամբ Խորենացին Աքեմենյանների պատմության հիմնական դավաճանող վերադարձ է Պարթևներին և այն հարմարեցրել պարթևական ժամանակներին ու նրանց պատմությանը: Այս շփոթության առկայությունը բազահայտորեն հաստատում է հենց ինքը՝ Խորենացին, Երվանդունի համարելով «Արշակունյաց ցեղից մի կնոջ որդի»՝ եամ «Արշակունյաց դեղի խառնուրդ»¹:

Պարզ է, որ Երվանդունիները ոչ մի կերպ չէին կարող Արշակունյաց ցեղից չլինել, քանի որ նրանք հանդես են եկել Պարթև Արշակունիների շատ առաջ՝ աքեմենյան ժամանակներում և իրենց վերադարձը են Աքեմենյան ժաղում:

Ինչպես վերևում է Քսենոփոնը, Օրոնտաս-Երվանդունիները ոչ թե Արշակունյաց՝ այլ Աքեմենյան ցեղի «խառնուրդ» էին՝ Օրոնտաս-Երվանդ II-ի (մ. թ. ա. 404—360) կինը Աքեմենյան Արտաքսերոսես II-ի դուստրն էր², նույնն է հաստատում նաև ալև, որ պարթևական թագավորների Խորենացու տված շարքում հիշատակված «վերջին Դարեհ» իրականում ոչ թե Պարթև, այլ Աքեմենյան վերջին թագավոր Դարեհ Վերջին Կոռոմանդոսն է (մ. թ. ա. 336—330), ինչը ընդունված է մեր պատմագիտության մեջ³:

1 Տե՛ս օտար աղբյուրները հայերի մասին, Լատինական աղբյուրներ № 3, Կ. Տակի-տոս, Տարեդրություններ, Երևան, 1941, էջ 23, 63, 77, 95: Նշված էջերում Պարթևները դիտված են որպես Աքեմենյանների հետնորդներ և նրանց նվաճումների օրինական ժառանգորդներ:

2 Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, 1990, Երևան, գիրք Բ, գլ. 14:

3 Նույն տեղում, Բ—Խդ:

4 Քսենոփոն, Անարասիս, 3-րդ, 14—13:

5 Հայ ժողովրդի պատմություն, հ. 1-ին, Երևան, 1971, էջ 505—506:

Խորենացու կողմից Աբեմենյաններին Պարթևների հետ շփոթելու մյուս վկայությունը հանդիպում է Ա գրքի իր գլխում, որտեղ Մարաց և Հայոց թագավորների ցանկը ներկայացնելուց առաջ նա գրում է. «Այժմ ես կանցնեմ թվարկելու մեր մարդկանց, մասնավոր թագավորներին, մինչև պարթևների տերության (հաստատվելը)»։ Բայց ներկայացված արքայացանկերը վերջանում են Մարաց Աժդահակ-Աստիագեսով (մ. թ. ա. 585—550) և Հայոց Տիգրան Երվանդյանով (մոտ մ. թ. ա. 560—535), որոնցից հետո միանգամայն անվիճելի է, որ թե՛ Մարաստանում և թե՛ Հայաստանում հաստատվել է ոչ թե Պարթևական, այլ Աբեմենյան տիրապետություն։

Սա թերևս ամենաբացահայտ օրինակն է, որը միանգամայն ուղղակիորեն հաստատում է, որ Մար Աբասյան աղբյուրում ներկայացված Աբեմենյաններին Խորենացին ներկայացրել է որպես Պարթևներ։

Աբեմեն-պարթևական շփոթությունը առկա է Խորենացու մոտ պարթև և հայ Արշակունիների պատմության հենց սկզբում՝ նրանց հիմնադրման պատմությունը ներկայացնելիս։ Այս պատմության ուսումնասիրությունն ու համեմատությունները հանգեցնում են այսպիսի եզրակացություններին։

Պարթև և հայ Արշակունիների հիմնադիրներ ներկայացված Արշակ Մեծին և Վաղարշակին վերագրված պատմությունը միայն արտաքինապես է շաղկապված Պարթևների հետ և բացահայտորեն հակասում է նրանց պատմությունը։ Այդ պատմությունը էականում համապատասխանում է Աբեմենյանների պատմությանը։

Եթե նրանց վերաբերող հատվածներում պարթևական ժամանակներին հարմարեցված անվանումները ուղղենք և համապատասխանեցնենք աբեմենյան ժամանակներին, ապա նրանց բովանդակությունը մեծ մասամբ կհամապատասխանի Աբեմենյանների պատմությանը, ավելի որոշակի՝ Աբեմենյանների հիմնադիր Կյուրոս Մեծի գործունեությանը (փակագծերում Խորենացու օգտագործած անվանումներն են)։

«Պատմում են, Կյուրոս Մեծը (Արշակ Մեծը)՝ Պարսից և Անշանի (ՊԱՐՍԻՑ և ՊԱՐԹԵՎԱՑ) թագավորը, որ ինքն էլ ցեղով պարսիկ (պարթև) էր, ապստամբեց մարերի (մակեդոնացիների) դեմ, թագավորեց բոլոր Արևելքի և Ասորեստանի վրա, սպանեց Նինվեում Նաբոնիդ (Անտիոքոս) թագավորին և ամբողջ տիեզերքը հնազանդեցրեց իրեն։ Սա իր եղբոր՝ Թանադեսարեսին (Վաղարշակին) թագավորեցնում է Հայաստանի վրա։ Նրան Մայրաքաղաք է տալիս Մծբինը և նրա համար սահմաններ է որոշում՝ Ասորիքի արևմտյան կողմից մի մասը, Պաղեստինը, Ասիան, ամբողջ Միջերկրայքը և Թեոպիան, Պոնտոս ծովից մինչև այնտեղ, ուր Կովկասը վերջանում է Արևմտյան ծովի մոտ, նաև Ասորպատականը»։

Բացի պարթևական ժամանակներին հարմարեցված անվանումներից, այս պատմությունը պարթևների պատմության որևէ ժամանակի չի համապատասխանում, բայց հիմնականում համապատասխանում է Աբեմենյանների, կոնկրետ՝ Կյուրոս Մեծի պատմությանը։

Արշակ Մեծի նվաճումների մեջ հիշատակվող «Ասորիքի արևմտյան կողմից մի մասը, Պաղեստինը» Փոքր Ասիան (ամբողջ Միջերկրայքը) և Թեսալիան (Թեոպիա) պարթևներին երբեք չի հաջողվել հիմնովին նվաճել։ Այս տարածքները Պարսկաստանին ողջ պատմության ընթացքում ամբողջությամբ հաջողվել է նվաճել միայն և միայն աբեմենյան ժամանակներում։ Այստեղ միանգամայն ակնհայտ է Աբեմենյանների պատմությունը Պարթևների վերագրելու և պարթևական ժամանակներին հարմարեցնելու մոտեցումը։ Այս նույն մոտեցումը առկա է Արշակ Մեծին առնչվող համարյա բոլոր հատվածներում։

Պարթևական ժամանակներին չի համապատասխանում նաև մակեդոնացիների դեմ ապստամբելուց ե նոր պետություն հիմնելուց առաջ Արշակ Մեծի Պարսից և Պարթևաց թագավոր լինելու հանդամանքը: Այն նույնպես հիշեցնում է Կյուրոս Մեծին, որը մարերի դեմ ապստամբելուց առաջ հանդիսանում էր Պարսից և Անշանի թագավորը: Խորենացու մոտ «Պարսիցը» մնացել է նույնը, իսկ «Անշանը», հարմարեցվելով պարթևական ժամանակներին, դարձել է «Պարթևաց»: Այստեղ ակնհայտորեն Մարերի դեմ ապստամբած և Արեւմտեան պետությունը հիմնած Կյուրոս Մեծին է համապատասխանում նաև այն, որ Արշակ Մեծը ներկայացված է որպես ապստամբ և նոր պետության հիմնադիր: Բայց պարթև Միհրդատ I Մեծը (մ. թ. ա. 174—138), որի հետ ամենից շատ նույնացվում է Արշակ Մեծը, ապստամբ և պարթևական պետության հիմնադիր չի հանդիսացել և համարվում է պարթևական հինգերորդ դահակայր, այլ ոչ թե առաջինը կամ երրորդը, ինչպես Խորենացու կամ միջնադարյան հայ մյուս պատմիչների մոտ է:

Պարթևների այս շրջանի պատմությանը միանգամայն չհամապատասխանող հաջորդ ակնհայտ հակասությունն այն է, որ Արշակ Մեծը իր եղբորը (կամ որդուն)⁷ նշանակել է Հայաստանի և նրան հարող մի շարք այլ երկրամասերի թագավոր: Ո՛չ Միհրդատ I Մեծի, ո՛չ նրա մոտակա նախորդների ու հետնորդների, ո՛չ պարթևների առաջին կամ երրորդ դահակայի եղբայրը, որդին կամ այլ աղբյուրից ու զինակիցը Հայաստանի թագավոր չի նշանակվել: Այդ ժամանակներում Հայաստանում հաստատապես իշխում էին Արտաշեսյան ամենահզոր արքաները, որոնք ոչ միայն չեն ենթարկվել պարթևներին, այլև որոշ ժամանակահատվածում իրենց են հնազանդեցրել նրանց:

Եթե Արշակ Մեծի եղբայր կամ որդի Վաղարշակին փորձենք նույնացնել հայ Արշակունյաց սոհմի հիմնադիր Տրդատ I-ի (մ. թ. 52,66—68) կամ Վաղարշ II-ի (186—198) հետ, ապա նրանք կնույնանան միայն այնքանով, որ նրանցից առաջինը եղել է պարթևաց թագավորի եղբայրը, իսկ մյուսը՝ պարթևաց մեկ այլ թագավորի որդին: Մնացած այլ ավելի էական հարցերում նրանք ոչ մի ձևով չեն նույնացվում: Եթե նրանք որևէ ձևով նույնիսկ նույնացվեն էլ, ապա դրանից կհետևի մեկ այլ անհեթեթություն: Կատարյալ, որ Արշակ Մեծի կերպարի կրողը հանդես է եկել մ. թ. ա. II դարում (հանձնես Միհրդատ Մեծի), իսկ նրա եղբոր կամ որդու կերպարը կրող Վաղարշակը հանդես է եկել 3—4 դար հետո, մ. թ. I—II դդ. (հանձնես Տրդատ I-ի կամ Վաղարշակ II-ի):

Այսպիսով՝ եթե Արշակ Մեծի կողմից եղբորը կամ որդուն Հայաստանի և մի քանի այլ երկրների թագավոր նշանակելու պատմությունը պարթևական ժամանակներին ոչ մի կերպ չի հարմարվում, ապա այն լիովին համապատասխանում է Արեւմտեան արքայատոհմի հիմնադիր Կյուրոս Մեծի գործունեությանը, որը, ինչպես վկայում է Քսենոփոնը, իր եղբորը, կամ այլ տարբերակով որդուն՝ Թանառքսարեսին իսկապես նշանակել է Հայաստանի և հարևան այլ երկրների (Մարաստան, Կատիշք) սատրապ-թագավոր⁸:

Նույնիսկ այն դեպքում, երբ Խորենացու ներկայացրած Արշակ Մեծի պատմությունը անվիճելիորեն վերաբերում է մ. թ. ա. II դարին՝ հիմնականում պարթևաց հզոր արքա Միհրդատ Մեծին, Սելևկյան թագավորներ Դեմետրիոս II Նիկատորին (մ. թ. ա. 145—140) և Անտիոքոս Սիդիսպոն (մ. թ. ա. 138—129), միևնույն է, այդ հատվածների վերլուծությունից հետևում է, որ նրանցում խոսքը նախնական բնագրում վերաբերել է արեւմտեան ժամա-

⁷ Ըստ հայ միջնադարյան պատմիչների, մի դեպքում Հայոց թագավոր է նշանակվել Արշակ Մեծի եղբայրը, իսկ մեկ այլ դեպքում՝ որդին:

⁸ Ք ս ե ն փ ո ն. Կյուրապղիա, 8-րդ, 7, 11: Արեւմտեան տիրապետության սատրապները տեղերում ունեցել են բավականին մեծ իշխանություն և ինքնուրույնություն, զորք պահելու և արծաթյա դրամ հատելու իրավունք և սատրապությունների ներսում ներկայացվել ու դիտվել են որպես թագավորներ:

նակներին, որը «պարթևականացվել է» հետագա պատմիչների վերաշարադրանքով: Օրինակ՝ վերոհիշյալ թաղավորների հետ կապված պատմության վերջում հորեն աշխատելով և ավելացնում է «...և Արշակը տիրում է աշխարհիս մի երրորդ մասին, ինչպես կարելի է սովորել Հերոդոտոսի Պատմության շորորորդ (պրբից), որտեղ աշխարհը բաժանված է երեք մասի և կոչված են՝ մեկը Եվրոպա, մեկը Լիբիա և մեկը Ասիա, որին և տիրեց Արշակը»⁹:

Այն Ասիան, որ նկատի է առնվել Հերոդոտոսի կողմից և հայտնի եղել նրա ժամանակներում, ընդգրկել է Փոքր Ասիայից մինչև Հնդկաստանի անապատները և Կովկասյան ու Միջինասիական լեռներից մինչև Արաբական ծովը՝ ընկած տարածաշրջանը¹⁰, որը, բացի Արաբական թերակղզուց, նվաճվել է Աքեմենյանների, բայց ոչ երբեք Պարթևների կողմից:

Ըստ ամենալինի այս հատվածի բնագրային բովանդակությունը վերաբերել է Կյուրոս Մեծի կողմից իր վրա հարձակված Լյուդիայի վերջին թագաժոր Կրեսոսին հաղթելու և դերելու (մ. թ. ա. 546), իսկ այնուհետև Բաբելոնի թագաժոր, Կրեսոսի դաշնակից Նաբոնիդին հաղթելու և սպանելու (մ. թ. ա. 538) պատմությանը: Բայց հորեն աշխատելով և ավելացնում է ներկայացրել Արշակ Մեծի կողմից իր վրա հարձակված Դեմետրիոս գերելու, իսկ այնուհետև նրան հաջորդած Անտիոքոս Սիրիացուն հաղթելու և սպանելու նույնաձև պատմությունը:

Հին պատմիչների կողմից տարբեր ժամանակներում տեղի ունեցած նույնաձև պատմությունները միմյանց հետ շփոթելու պատճառները հասկանալու համար այստեղ անհրաժեշտ է խոսել հին աղբյուրներում գոյություն ունեցող ժամանակագրական և անվանումների մեծ շփոթի մասին: Տարբեր ազգեր, տարբեր աղբյուրներ ու հեղինակներ ունեցել են միանգամայն տարբեր թվականություններ ու ժամանակագրություն, իսկ որոշ աղբյուրներում դրանք ընդհանրապես բացակայել են: Բացի այդ, միևնույն պատմական անձնավորությունը տարբեր աղբյուրներում ու տարբեր հեղինակների կողմից կոչվել է միանգամայն տարբեր անուններով: Այս ամենը առաջացրել է շատ մեծ սխալներ ու խառնաշփոթություններ: Հին պատմիչները (սովյալ դեպքում Մովսես հորեն աշխատելով) այսպիսի խառնաշփոթ աղբյուրներում ներկայացված սլատմական իրադարձությունների ինքնությունը չէին կարող պարզել ո՛չ ներկայացված թվականություններով և ո՛չ էլ անվանումներով, այլ իրենց հայտնի պատմական իրադարձությունների հետ համեմատելով ու համապատասխանեցնելով: Հենց այս հանգամանքով է բացատրվում միանգամայն տարբեր ժամանակներում տեղի ունեցած, որոշ չափով իրար նման պատմական իրադարձությունների միմյանց հետ շփոթումն ու նույնացումը, որը հատկապես առկա է հորեն աշխատելու մոտ:

Պարթևների պատմությանը արմատապես հակասող և Աքեմենյանների պատմությանը լիովին համապատասխանող մեջբերված հատվածներից բացի կան նույն բանը հաստատող շատ այլ հատվածներ ու հանդամանքներ: Օրինակ՝ Վաղարշակի կողմից թագադիր ասպետ նշանակված Բադարատի հայրը՝ Շամբաթը (ըստ Սեբեոսի¹¹՝ Փառնավաղը), թե՛ հորեն աշխատելու և թե՛ Սեբեոսի կողմից, ներկայացված է որպես Բաբելոնի թագաժոր Նաբոնիդի որդու II-ի (մ. թ. ա. 605—562) ժամանակակիցը¹²: Եթե Բադարատի հայրը հանդես է եկել մ. թ. ա. VI դարի կեսերին, բնականաբար նրա որդին՝ Բադարատը և նրա ժամանակակիցները Արշակ Մեծը և Վաղարշակը կարող էին հանդես գալ մ. թ. ա. VI դարի երկրորդ կեսում, այլ ոչ թե մ. թ. ա. II դարի երկրորդ

⁹ Մ. խ ո ռ ի ն ա ջ ի, Բ—ք:

¹⁰ Հ ի ռ ո ղ ո տ ո ս. Պատմություն, գիրք 3-րդ, 37—40:

¹¹ Սեբեոս անվան տակ նկատի է առնված Սերևուին կից Անանուն պատմիչը:

¹² խ ո ռ ի ն ա ջ ի, Ա—Իր: Սեբեոս՝ Եպիսկոպոսի Պատմություն, Երևան, 1939, գլուխ Ա:

կեսում, ինչպես որ ներկայացրել են հորենացին ու Սեբեոսը, որոնք թեև Բաղարատին տեղավորել են մ. թ. ա. II դարում, բայց Բաղարատի հորը, չնկատելով, թողել են մ. թ. ա. VI դարում, այսպիսով ևս մեկ անգամ մատնելով, որ Արշակ Մեծի և Վաղարշակ-Արշակ Փոքրի կերպարի տակ իրականում թաքնված են մ. թ. ա. VI դարում հանդես եկած Կյուրոս Մեծն ու Թանաոքսարեսը:

Այս և նախորդ հանդամանքներից հետևում է, որ թե՛ հորենացին և թե՛ նրան նախորդած ու հաջորդած պատմիչները միանգամայն համոզված են եղել, որ Մար Աբասյան աղբյուրում ներկայացված Արշակ Մեծի և Վաղարշակի պատմությունը վերաբերում է Պարթևներին և առանց կասկածելու այն հարմարեցրել են պարթևական ժամանակներին: Այս մոտեցումը և համոզմունքը արմատավորված է եղել մինչև հորենացին և ըստ ամենայնի թելադրված է եղել Պարթև և հայ Արշակունիների քաղաքական շահերով:

Թևրևս այս ներկայացված տվյալները լիովին բավարար են Արշակ Մեծ-Կյուրոս Մեծ նույնության մեջ համոզվելու համար, բայց գոյություն ունեն նաև այլ՝ ոչ պակաս համոզիչ փաստարկներ, որոնք հիմնականում բխում են Մար Աբասյան աղբյուրի կառուցվածքային բովանդակության վերլուծությունից:

Հորենացու միջոցով մեզ հասած Մար Աբասյան աղբյուրում թևրևս ավելի շատ աչքի է դարձնում այն տարօրինակ հանգամանքը, որ Տիգրան Երվանդյանից (մ. թ. ա. 560—535) մինչև մ. թ. ա. 132 թ.՝ Վաղարշակի հանդես գալու տարեթիվը ընկած մոտ չորս հարյուրամյա ժամանակահատվածը, որում ըստ հավաստի աղբյուրների հանդես են եկել Երվանդունիները և Արտաշեսյան առաջին թագավորները՝ մնացել է «զատարկ», չլրացված: Այս հսկա ժամանակահատվածի վերաբերյալ կա պատմական իրադարձություն ներկայացնող ընդամենը մի փոքրիկ նախադասություն՝ Վահեին և Ալեքսանդր Մակեդոնացուն վերաբերող¹⁸:

Այս և ներկայացված մյուս հարցերն ու հանգամանքները հանգեցնում են այսպիսի հետևությունների.

ա) Եթե պատմիչ Մար Աբաս Կատինան, ինչպես հորենացին է գրում, իսկապես հանդես է եկել մ. թ. ա. II դարում կամ, ինչպես որոշ ուսումնասիրողներ են գտնում՝ մ. թ. III—IV դդ., ապա ինչպե՞ս է, որ նա բոլորովին չի անդրադարձել իրենից անմիջապես առաջ հանդես եկած Արտաշեսյան և Երվանդունյան դինաստիաներին: Չէ որ հայ ժողովրդի պատմության մեջ չափազանց մեծ տեղ գրավող և առաջնային նշանակություն ունեցող այս դինաստիաների մոտ 500-ամյա պատմությունը երբեք հնարավոր չէ, որ անտեսվեր ու անկարևոր համարվեր: Ինչպե՞ս է, որ Մար Աբասը ավելի հին ժամանակների վերաբերյալ բավականին հարուստ նյութ է ներկայացրել, իսկ իրեն անմիջապես նախորդած այս հսկա ժամանակահատվածի վերաբերյալ բարարակապես ոչինչ չի հաղորդել և այն թողել է միանգամայն զատարկ: Մար Աբասյան աղբյուրում տեղ չեն գտել նաև Հայաստանից դուրս՝ արտաքին մերձահա աշխարհում այդ 400-ամյա ժամանակահատվածում ծավալված նշանակալից իրադարձությունները: Իսկ այդ 400-ամյա ժամանակահատվածում տեղի են ունեցել Հին Աշխարհի ամենախոշորագույն և շրջադարձային իրադարձություններից երկուսը, որի առաջնային թատերաբեմերում է եղել Հայաստանը: Դրանք Աքեմենյան և նրան հաջորդած Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներով ստեղծված աշխարհակալությունների առաջացումն էր Հնդկաստանից Հունաստան ու Եգիպտոս տարածված հսկայածավալ տարածաշրջանում:

Թե՛ Աքեմենյան և թե՛ Սելևկյան աշխարհակալությունների արտաքին ու ներքին քաղաքականության մեջ Հայաստանը ակտիվ դեր է խաղացել և իր

¹⁸ Խ ո ո Ն ա ջ ի, Ա—լա:

անմիջական մասնակցությունն է ունեցել ամենաառաջնային հարցերում: Այսինքն մեր պատմիչները չէին կարող շրջանցել կամ անկարևոր համարելով անտեսել այս աշխարհակալությունների հետ Հայաստանի ունեցած շատ սերտ փոխհարաբերությունները: Ակնառու օրինակ են Պարույր Սկայորդին և Տիգրան Երվանդյանը, որոնց դերը Մարական և Աքեմենյան աշխարհակալությունների պատմության մեջ նույնիսկ ուռճացված է: Բայց Մար Աբասյան աղբյուրում, բացի «Մարաց իշխանությունը: տապալելուց»¹⁴, Կյուրոս Մեծի և Աքեմենյան մյուս թաղավորների հետ կապված հետագա կարևորագույն իրադարձությունների վերաբերյալ բացարձակապես ոչինչ չի հաղորդվում: Սա այն դեպքում, երբ Հայաստանը իր ոչ փոքր զորաբանակներով ակտիվ մասնակցություն է ունեցել Կյուրոս Մեծի և մյուս Աքեմենյան թագավորների մղած պատերազմներում, հանդիսացել է Դարեհ I-ի դեմ բռնկված ապստամբության ամենահզոր ուժերից մեկը և այլն¹⁵: Նույնը վերաբերում է Ալեքսանդր Մակեդոնացու և Սելևկյան աշխարհակալության մինչև մ. թ. ա. II դարի վերջին տասնամյակների հետ կապված իրադարձություններին: Այս 400-ամյա ժամանակահատվածին վերաբերող քիչ թե շատ պատմական արժեք ներկայացնող ամբողջ նյութն ընդգրկված է մի ոչ մեծ գլխի մի մասում: Եթե այս նյութից առանձնացնենք ոչինչ չասող անունների շարանը, ապա նրանից կմնա պատմական իրադարձություն ներկայացնող ընդամենը մի փոքրիկ նախադասություն՝ «Սա (Վահեն) Ալեքսանդր Մակեդոնացու դեմ ապստամբելով՝ մեռնում է նրա ձեռքով»¹⁶: Այսինքն, այս 300-ամյա ժամանակահատվածի վերաբերյալ խորենացին համարյա ոչինչ չի հաղորդում, ինչն էլ հիմք է դարձել այն կոչելու «դատարկ ժամանակահատված»: Եվ որպեսզի մ. թ. ա. VI դարը ինչ-որ ձևով կապի մ. թ. ա. II դարի հետ, պատմիչը մեջ է բերել Վահենի ու Ալեքսանդր Մակեդոնացու հետ կապված փոքրիկ նախադասությունը: Ամենայն հավանականությամբ Մար Աբասյան աղբյուրում Վահեն հիշատակված է եղել, բայց նրան Ալեքսանդրի հետ կապելը կատարվել է խորենացու նախաձեռնությամբ: Այսպես մտածելու հիմք է տալիս Ալեքսանդրի հպանցիկ, համարյա աննկատ հիշատակման ձևը: Շատ անհավանական է, որ հուշակավոր Ալեքսանդր Մեծի և հայ որևէ իշխանավորի միջև տեղի ունեցած որևէ իրադարձություն այսպես չոր ձևով ներկայացված լինեի հայկական աղբյուրներում և այն իր հերթին չգունազարդվեր խորենացու կողմից:

«Հայոց Պատմության» հաջորդ՝ Բ գրքի ա գլխում, Վաղարշակի պատմությանը անդնելուց առաջ, խորենացին Ալեքսանդր Մակեդոնացուց բացի, հիշատակում է նաև Սելևկոս Նիկատորին, Անտիոքոս Սոտերին և Անտիոքոս Թեոսին իրենց գահատարիներով: Այս անունների ու թվերի հիշատակումը ավելի վստահորեն կարելի է վերագրել ոչ թե Մար Աբասին, այլ Մովսես խորենացուն, քանի որ նա ոչ միայն այս ձևով մ. թ. ա. VI դարը կապել է մ. թ. ա. II դարի հետ, այլև այս հայտնի անուններով ու ընդունված թվերով է սկսել կառուցել իր ողջ ժամանակագրական համակարգը:

Այսպիսով, թեև մ. թ. ա. VI—II դդ. Հին Աշխարհի և Հայաստանի կյանքում տեղի են ունեցել շրջադարձային խոշորագույն իրադարձություններ, բայց խորենացու ներկայացրած Մար Աբասյան աղբյուրում այդ շատ նշանակալից ժամանակահատվածի վերաբերյալ րստ էություն ոչինչ չի հաղորդվում, ինչը բացատրվում է նրանով, որ մ. թ. ա. VI դարի կեսերին հանդես եկած պատմիչ Մար Աբասը չէր կարող որևէ բան զրել իրենից հետո ծավալված իրադարձությունների վերաբերյալ:

¹⁴ Խ ո Ր Լ Ն ա ջ Ի, Ա—Իդ.

¹⁵ Տե՛ս Բիհիսթունյան արձանագրության, Հերոդոտոսի, Քսենոփոնի, Արիանոսի տեղեկությունները Հայաստանի մասին:

¹⁶ Խ ո Ր Լ Ն ա ջ Ի, Ա—Էա.

բ) Ամեն մի պատմիչ ամենահարուստ և ճշգրիտ պատկերացումներ է ունենում, բնականաբար, իր ապրած ժամանակաշրջանի վերաբերյալ, որից հետո նա առավել չափով տեղյակ է լինում իրեն անմիջապես նախորդած ժամանակահատվածին։ Այս առումով Սար Աբասը առավել հանգամանալից ներկայացրել է իր ժամանակակից՝ Վաղարշակի պատմությունը, որից հետո նա դարձյալ հանգամանալից ներկայացրել է Տիգրան Երվանդյանի պատմությունը։ Համեմատության համար ասենք, որ Հայոց նախնիներից ու թագավորներից հորենացին Մար Աբասյան աղբյուրից առանձին գլուխներով առանձնացրել և ներկայացրել է Հայկ Նահապետին ու Արամին՝ երկուական գլուխ, Արա Դեղնյիկին ու Պարույր Սկայորդուն՝ մեկական գլուխ, Տիգրան Երվանդյանին՝ 7 գլուխ և Վաղարշակին՝ 8 գլուխ։ Այսինքն իր ժամանակակից Վաղարշակից հետո Սար Աբասը մյուսներից անհամեմատ առավել հանգամանալից անդրադարձել է մ. թ. ա. VI դարի կեսերին հանդես եկած Տիգրան Երվանդյանի պատմությանը։

Եթե պատմիչ Մար Աբաս Կատինան իսկապես հանգես եկած լիներ մ. թ. ա. II դարում կամ դրանից ավելի ուշ, ապա ինչպես է, որ նա նվազադույն պատկերացում չունենալով իրեն անմիջապես նախորդած 4-դարյա ժամանակահատվածի վերաբերյալ, չափազանց ընդարձակ, մանրակրկիտ ու թարմ տեղեկություններ է հաղորդել այդ ժամանակահատվածից շատ առաջ հանդես եկած Տիգրան Երվանդյանի վերաբերյալ. պատասխանը նույնն է՝ Մար Աբաս Կատինան մ. թ. ա. VI դարի պատմիչ է, և իր ժամանակակից՝ մ. թ. ա. VI դարի երկրորդ կեսին հանդես եկած Թանաոքսարես-Վաղարշակից հետո առավել հանգամանալից անդրադարձել է Հայոց գահի վրա Թանաոքսարեսին անմիջապես նախորդած Տիգրան Երվանդյանի պատմությանը։ Տիգրան Երվանդյանից մինչև Վաղարշակը ընկած 4-դարյա «դատարկ» ժամանակահատվածը հենց իր դատարկությանը վկայում է, որ իրականում այդպիսի ժամանակահատված գոյություն չի ունեցել, այսինքն Տիգրան Երվանդյանին անմիջապես հաջորդել է Թանաոքսարես-Վաղարշակը։ Այս «դատարկ» ժամանակահատվածը առաջացել է հորենացու թույլ տված մեծ շեղման հետևանքով, որը Թանաոքսարես-Վաղարշակին տեղագրել է ոչ թե Տիգրան Երվանդյանից անմիջապես հետո, ինչպես եղել է Մար Աբասյան աղբյուրում, այլ նրանից 4 դար հետո։ Այդ 4-դարյա ժամանակահատվածի վերաբերյալ հորենացին Մար Աբասյան աղբյուրում բնականաբար ոչինչ չէր կարող դանել ու ներկայացնել, քանի որ այն արհեստականորեն ստեղծվել էր ինքը, իր թույլ տված մեծ շեղման հետևանքով առաջացած խոշոր բացվածքը ծածկելու համար։

Այսպիսով այս վերլուծությունները հանգեցրին այսպիսի հետևությունների՝ պատմիչ Մար Աբաս Կատինան մ. թ. ա. VI դարի պատմիչ է։ Դա է վկայում այն, որ նրա «Մատյանում» տեղ չի գտել մ. թ. ա. VI դարից հետո ընկած ժամանակաշրջանների պատմությունը։ Դա է հաստատում այն, որ պատմիչը անհամեմատ առավել հանգամանալից անդրադարձել է մ. թ. ա. VI դարի իրադարձություններին։ Այս մասին է վկայում նաև այն, որ մ. թ. ա. VI դարում հանդես եկած Տիգրան Երվանդյանի և Թանաոքսարես-Վաղարշակի միջև արհեստականորեն ստեղծված 4-դարյա ժամանակահատվածը մնացել է «դատարկ», չլրացված։

Ներկայացված տեսակետը հիմնավորող շատ այլ ակնհայտ փաստարկներից կարելի է անդրադառնալ նաև հորենացու ներկայացրած պարթևական թագավորների ցանկին, որն ըստ էության պարթևական ժամանակներին հարմարեցված Աքեմենյանների ամբողջական արքայացանկն է։ Դեռևս Ա. Գարսաղյանը տարակուսելով, որ հայտնի են 30 պարթևական թագավորներ, իսկ հորենացին ներկայացրել է ընդամենը 14-ը՝ եզրակացնում է, որ «...անվանք թագավորաց որ առ հորենացվուն՝ կամ հնարված են, և կամ, որ ավելի

հավանական է, կը վերաբերին այլոց հարստության¹⁷։ Թե «այլոց» հատկապես որ «հարստությանը»՝ շատ ավելի որոշակի է պատասխանում Գ. Սարգսյանը, որը քննելով հորինացու ներկայացրած արքայացանկի անունների ծագումը, եզրակացնում է. «Այստեղ հանդիպում ենք անունների մի խմբի, որն աչքի է ընկնում ոչ միայն իր խորթությամբ պարթև Արշակունիների իրական արքայացանկին, այլև նրանով, որ հաճախ է մի այլ դինաստիայի՝ Աֆեմենյանների արքայացանկին։ Անունների այս խումբն է Արտաշես, Դարհ, Արշավիր, Արշեղ։ ...Առկա անունները սպառում են Աքեմենյան դինաստիայի 'Իարհայան ճյուղի անվանական ցանկը ...Աֆեմենյանները Մ. հորենացու մոտ ժամանակագրական առումով դարձել են պարթև Արշակունիներ»¹⁸։

Եթե այս և հոգվածում ներկայացված մյուս ակնհայտ փաստարկներին ավելացնենք այն, որ հորենացու կողմից որպես Պարթևներ ներկայացված թագավորների թիվը 14 է, իսկ Աքեմենյան դահին տիրած տիրակալների թիվը՝ 13, ապա ակնհայտ կդառնա, որ հորենացու ձեռքի տակ փաստորեն եղել է Աքեմենյանների արքայացանկը, որը նա առանց էական փոփոխությունների ենթարկելու հարմարեցրել է պարթևական ժամանակներին։ Աքեմենյանների պարթևականացված այս արքայացանկից հետևում է, որ ոչ միայն Մար Աբասյան աղբյուրը, այլև հստակացու ձեռքի տակ եղած ավելի ուշ շրջանի որոշ այլ աղբյուրներ ևս ներկայացրել են Աքեմենյանների պատմությունը, որը հորենացին դիտել ու ներկայացրել է որպես Պարթևների պատմություն։

Այսպիսով բացահայտվում է այն հիմնական շեղումը, որը թույլ է տվել Պատմահայրը «Հայոց Պատմությունը» դրելիս։ 'Իսկ Կյուրոս Մեծի եղբայր կամ որդի Թանաոքսարեսի Հայաստանում որպես սատրապ-Ռուսապոր հանդես գալը մ. թ. ա. 535 թ. փոխարեն մ. թ. ա. 132 թ. համարելն է։ Խորենացին «Աքեմեն-Պարթևական» շփոթության աղբյուրությամբ Թանաոքսարեսին տեղափոխել է պարթևական ժամանակներում, նրան տալով պարթևական Վաղարշակ անունը¹⁹։ Հենց այս շեղման հետ են կապված նրա «Պատմություն» միջնամասում առաջացած հիմնական սխալներն ու խառնաշփոթությունը։ Այս հիմնական շեղման բացահայտումով հնարավոր է դառնում ոչ միայն ասել թե ինչու է նա սխալվել, այլև մեկ առ մեկ ասել, թե որ տեղերում է նա սխալվել, ինչը ինչի հետ է շփոթել և ովքեր են իրականում նրա ներկայացրած «անհայտ» թագավորները։

Հորենացին Թանաոքսարես-Վաղարշակին մ. թ. ա. 535 թ. փոխարեն տեղադրել է մ. թ. ա. 132 թ. բայց մ. թ. ա. 132 թ. առաջ տեղի ունեցած իրադարձությունները ոչ թե անտեսել է, այլ առաջ տալով տեղափոխել է ու հարմարեցրել այդ թվականից հետո։ Օրինակ, մ. թ. ա. 132 թ. առաջ հանդես եկած Երվանդունյան և Արտաշեսյան դինաստիաների ներկայացուցիչներին պատմիչը տեղադրել է մ. թ. ա. 132 թ. հետո։ Այսինքն նա Տիգրան Երվանդյանից (մ. թ. ա. 560—535) հետո, մինչև հայ Արշակունիների վերացումը (428 թ.) ընկած մոտ 960-ամյա ժամանակաշրջանի պատմությունը տեղափոխել է մ. թ. ա. 132 թ. մինչև հայ Արշակունիների անկումն ընկած 560-ամյա ժամանակահատվածի մեջ։ Բայց որպեսզի 560-ամյա ժամանակահատվածի

17 Ա. Մ. Գարադաշյան. Քննական պատմություն Հայոց. Կոստանդնուպոլիս, 1880, մասն Ա, գլուխ է—5, 12 (լջ 226, 229)։

18 ՏԼ՝Ս Գ. Սարգսյան. Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին. լջ 121, 200։

19 Մովսես Խորենացին Թանաոքսարեսին տվել է պարթևական Վաղարշակ անունը, որը հայտնի չէ, թե ինչպես է կոչվել քաղաքներից հունարենի թարգմանված, տարրեր խմբագրումների ու միջամտությունների ենթարկված Մար Աբասյան աղբյուրում։ Ամեն դեպքում Մար Աբասյան աղբյուրի հունարեն բնագրում նա Վաղարշակ չի կոչվել, ինչը ակնհայտ է այս աղբյուրի Սերնոսյան տարբերակից, որտեղ Վաղարշակին փոխարինում է Արշակ Փոքր անվանումը։

մեջ հնարավոր լինի տեղավորել 960-ամյա պատմություն, հորենացին ոչ միայն կրճատել է մի շարք ոչ այնքան կարևոր դեր կատարած տիրակալների, այլև մեկ թագավորի կերպարում խտացրել է մի քանի թագավորների գործերը:

Այս ձևով նա 960 տարին խտացնելով՝ դարձրել է 560 տարի Հիմնականում հենց այս մոտեցման արդյունքն են հորենացու ստեղծած համարյա բոլոր հավաքական կերպարները, որոնցում խտացված են շատ ավելի թագավորներ ու ժամանակներ, քան նա ներկայացրել է: Այս առումով առանձնանում է հատկապես Երվանդ Վերջինի կերպարը, որը մարմնավորում է ոչ միայն Երվանդյան մի քանի թագավորների, այլև կրում է վրաց դրածոներ Սիհրզաաի ու Հռագամիզգի (35—54) գործերը: Նույն ձևով Արտաշես II-ի կերպարում, պատմական Արտաշես I-ի (մ. թ. ա. 201—160) գործունեության հետ դուրսհան, ներկայացված են նաև Տրդատ I-ի (52—88) գործերը: Տարբեր ժամանակների գործեր են վերագրված նաև հորենացու ներկայացրած մյուս թագավորներին: Այս ձևով նույնացվել ու համատեղվել են միմյանցից շատ հեռու գտնվող և միանգամայն անհամատեղելի ժամանակներ ու իրադարձություններ:

հորենացու հիմնական շեղման բացահայտումով հասկանալի է դառնում նաև, որ նա Բանառքսարես-Վաղարշակի ժամանակը 4 դար առաջ տալու հետ, առաջ է բերել նաև մյուս թագավորներին, որի պատճառով մ. թ. ա. III, II դդ. հանդես եկած Երվանդ Վերջինն ու Արտաշեսը մոտ երկուսուկես դար առաջ շարժվելով՝ հայտնվել են մ. թ. I դարում: Միաժամանակ Երվանդին ու Արաաշեսին, ինչպես նաև մյուս առաջ բերված թագավորներին նա վերագրել է նաև այն ժամանակների իրադարձությունները, որում նրանք հայտնվել են իր ստեղծած ժամանակագրությամբ: Բացի այդ, բացահայտվում է, որ թեև հորենացին հայոց թագավորներից շատերին իրենց համապատասխանող ժամանակներում չի տեղադրել, բայց աշխատել է պահպանել ճիշտ ժամանակահամեմատություն և թագավորների ճիշտ հերթականությունը: Այս համեմատությունների համար որպես հիմնական է ծառայել նրա Կրկրորդ Արտաշեսի հավաքական կերպարի տակ հանդես եկող և՛ Արտաշես I-ը, և՛ Տրդատ I-ը:

Արտաշես-Տրդատ I-ի հետ ժամանակահամեմատություններով հնարավոր է դառնում բացահայտել հորենացու ներկայացրած առեղծվածային, խառնակ ու անհավաստի համարվող թաքնված կերպարներն ու իրադարձությունները: Օրինակ, ըստ հորենացու Քաղաքից հետո հայոց թագավորությունը եբկու մասի է բաժանվում, իսկ Արտաշես II-ից (որը պատմական Արտաշես I-ն է) մինչև Աբդար ընկած է 50 տարի, իսկ ըստ հավաստի տվյալների Արտաշես I-ից մոտ 50 տարի առաջ, մ. թ. ա. III դարի կեսերին Երվանդունյան Հայաստանը իսկապես երկու մասի է բաժանվել: Սա նշանակում է, որ այս հաջորդումը վերաբերում է մ. թ. ա. II դարի կեսերի Երվանդունյան Հայաստանի իրադարձություններին:

հորենացու Արտաշես II-ի հետ համեմատելով հնարավոր է դառնում բացահայտել նաև թե ով է իրականում հորենացու ներկայացրած առեղծվածային Արտաշես Առաջինը:

Ըստ հորենացու Արտաշես I-ը (մ. թ. ա. 97—72) թագավորել է պատմական Արտաշես I-ին համապատասխանող Արտաշես II-ից (70—111) 167 տարի առաջ, իսկ ըստ հավաստի աղբյուրների Արտաշես I-ից (մ. թ. ա. 189—160) մոտ 167 տարի առաջ Հայաստանում իշխում էր Կողոմանոսը (մ. թ. ա. մոտ 359—336), որը հետագայում Դարեհ III անունով դարձավ Աքեմենյան Պարսկաստանի թագավոր (մ. թ. ա. 336—330):

Որքան էլ անսպասելի թվա, հորենացու ներկայացրած Արտաշես Առաջինի կերպարի տակ իրականում թաքնված է հենց ինքը՝ Աքեմենյան Պարսկաստանի վերջին թագավոր Դարեհ III Կողոմանոսը:

«Մեր Արտաշես Առաջինի մասին և նախագահությունը հափշտակելու մասին» վերնագրի տակ և նրան հաջորդող գլխում²⁰ հորենացին հաղորդում է. «Արտաշեսն իր հոր Արշակի փոխարեն թագավորում է Հայոց վրա Պարսից Արշական թագավորի 24-րդ տարում, և առաջագետ լինելով, չի կամենում երկրորդական գահը գրավել, այլ ձգտում է ավագության, Արշականը համաձայնելով՝ տալիս է նրան նախագահությունը (Բ գրքի ժթ գլխում՝ «Պարսիկներից խլեց նախագահությունը»): Որովհետև (Արտաշեսը) հպարտ և պատերազմասեր մարդ էր, որ և Պարսկաստանում արքունիք շինեց իրեն համար և առանձին դրամ կտրել տվեց իր պատկերով, և Արշականին իր ձեռքի տակ թագավոր դրեց Պարսկաստանի վրա, ինչպես և իր որդի Տիգրանին՝ Հայոց վրա...»:

Բայց Արտաշեսը երկու ծովերի մեջ եղած ցամաքը նվաճելով, օվկիանոսը լցնում է նավերի բազմությամբ, կամենալով բոլոր արևմուտքն իրեն հպատակեցնել. որովհետև Հռոմում մեծ խռովություն ու շփոթություն լինելով՝ ոչ ոք նրան ուժեղ դիմադրություն ցույց չտվեց: Բայց չեմ կարող ասել, ինչ բանի ազդեցությամբ, ահագին աղմուկ և շփոթություն է ծագում, և բազմաթիվ զորքերն սկսում են միմյանց կոտորել: Իսկ Արտաշեսը փախչելիս մեռնում է, ինչպես ասում են՝ իր զորքերից, քսան և հինգ տարի թագավորելով:

Հիմնականում սա է Արտաշես I-ի գործունեության նկարագիրը: Նրան է վերագրված նաև Կրեսոսին ձերբակալելու պատմությունը²¹, որը անվիճելիորեն վերաբերում է Կյուրոս Մեծին: Բայց Արտաշես I-ին վերաբերող հիմնական պատմությունը թե ընդհանուր գծերով և թե մանրամասնորով լիովին համապատասխանում է Աթեմնյան Պարսկաստանի վերջին թագավոր Դարեհ III Կոզմանոսին: Այդ նա էր, որ իր նախորդից՝ Արտաքսերքսես III-ից (մ. թ. ա. 359—338) որպես պարզևատրում ստանում է Հայաստանի սատրապությունը և «թագավորում է Հայաստանի վրա»: Հետո դավով սպանելով Պարսից արքային «հափշտակում է նախագահությունը» և դառնում ամբողջ պարսկական տիրապետության թագավորը և «իր ձեռքի տակ» թագավորսատրապներ ունեն և՛ Հայաստանում, և՛ Պարսկաստանում, այն է՝ Պարսք նահանգում և մյուս սատրապություններում:

Իր զահ բարձրանալու տարում՝ մ. թ. ա. 336 թ., երբ իրոք «Հռոմում», այն է՝ հունական աշխարհում «մեծ խառնակություն ու շփոթություն» էր, որովհետև սպանվել էր Մակեդոնիայի թագավոր Փիլիպոս II-ը, իսկ նրա որդին՝ Ալեքսանդրը պատերազմի մեջ էր Հունական ապստամբ պոլիսների հետ, Դարեհ III-ին իսկապես «ոչ ոք ուժեղ դիմադրություն ցույց չտվեց» և նա հեշտությամբ ամբողջությամբ վերանվաճեց «երկու ծովերի մեջ եղած ցամաքը»՝ այն է Փոքր Ասիան, կամ ավելի ճիշտ՝ նրա ծայր արևմտյան այն շրջանները, որոնք մինչև այդ գրավվել էին մակեդոնացիների կողմից: Այդ ժամանակներում Միջերկրական և Սև ծովերը իրոք լցված էին ժամանակի ամենամեծ ու հզոր նավատորմն ունեցող Աթեմնյանների «նավերի բազմությամբ», և Դարեհը իրոք «բոլոր Արևմուտքը իրեն հպատակեցնելու» լուրջ մտադրություն ունեյր, մանավանդ որ դրանում շահագրգռված էին հենց հունական ապստամբ պոլիսները և մակեդոնական գերիշխանությունը չընդունող հույն հեղինակավոր շատ գործիչներ: Բայց Ալեքսանդր Մակեդոնացին առաջինը հասցրեց հարվածել և նրանից մեկը մյուսի հետևից ջախջախիչ պարտություններ կրող Դարեհի զորքերի մեջ «ահագին աղմուկ և շփոթություն էր ծագել»: Եվ վերջապես այդ Դարեհ III-ն էր, որ իր տիրապետությունը Ալեքսանդրին թողած՝ «փախչելիս մեռնում է, ինչպես ասում են իր զորքերից»՝ մ. թ. ա. 330 թ., Բակտրիայում: Սրանք այնպիսի եզակի մանրամասներ են,

²⁰ Խ ո Ր Ե Ն Ս Գ Ի, Բ—Ժա, Ժբ:

²¹ Խ ո Ր Ե Ն Ս Գ Ի, Բ—Ժգ:

որ վերաբերում են միայն ու միայն Դարեհ III Կոդոմանոսին: Նույնիսկ այն, որ Արաւաշես I-ը ըստ հորենացու թագավորի է պարսից Արշական թագավորի՝ 24-րդ տարում, համապատասխանում է Դարեհ III-ին, որը թագավորել է Արտաքսերքսես III-ի (մ. թ. ա. 359—338) 24-րդ տարում՝ մ. թ. ա. 336-ին: Այսինքն հորենացու մոտ Աքեմենյան Արտաքսերքսես անունը փոխարինված է պարթևական Արշական անվանումով: Բացի այդ, Դարեհ III-ի հոր անունը Արշամ է, իսկ ըստ հորենացու Արտաշես I-ի հոր անունը Արշակ է, Այսինքն հորենացու մոտ, ինչպես նախորդ դեպքերում, Աքեմենյան անունները հաճախ փոխարինված են նրանց ինչ-որ չափով նման պարթևական անուններով:

Անվանումների նմանակման տեսակետից շատ ուշագրավ ու կարևոր է այն, որ Բիտանական թանգարանում պահվող բարելական աստղաբաշխական աղյուսակներում Դարեհ III-ի «նախաթագավորական» անունը եղել է Արաւաշատ²²: Այստեղից հետևում է, որ հորենացու կողմից Դարեհ III Կոդոմանոսին Արտաշես անունը տալը նույնպես ինքնահար չէ և համապատասխանում է պատմական փաստերին: Ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ հորենացու Արտաշես I-ը կրում է Դարեհ III Կոդոմանոսի կենսագրության բոլոր էական դրվագները, հորենացու ներկայացրած Արտաշես I-ի կերպարի տակ իրականում թաքնված է Աքեմենյան Պարսկաստանի վերջին թագավոր Դարեհ III Կոդոմանոսը: Քանի որ նա շատ ավելի երկար ժամանակ, մոտ 20—25 տարի, եղել է Հայաստանի սատրապ-թագավորը և միայն 6 տարի համայն Պարսկաստանին, ապա միանգամայն բնական է, որ հայ հին պատմագիրությունը և նրան հետևած հորենացին Արտաշես-Դարեհին դիտել ու ներկայացրել են որպես Հայոց թագավոր, միաժամանակ նշելով, որ «երկրորդական դահլձ» չբավարարվելով, Արտաշեսը «հափշտակել է» համայն Պարսկաստանի «նախադահլձությունը»:

Ս. Մալխասյանը հորենացու «Հայոց Պատմության» ներածականում գրում է, որ «գոյություն չունեցող» Արտաշես I-ին վերագրված գործերը հիմնականում վերաբերում են Տիգրան Մեծին և Միհրդատ Պոնտացուն²³: Բայց ինչպես ակնհայտ է ներկայացված բացահայտ տվյալներից, Արտաշես I-ը հնարավոր չէ, նա պատմության մեջ իսկապես գոյություն է ունեցել և նրան վերաբերող գործերը ամբողջությամբ վերցրած իր եզակի առանձնահատկություններով պատմության մեջ հնարավոր է վերագրել միայն մեկ անձնավորության՝ Դարեհ III Կոդոմանոսին:

Արտաշես-Դարեհի կերպարի բացահայտումով ևս մեկ անգամ ակնհայտ է դառնում, որ ժամանակագրության մեջ խոշոր շեղումների մեջ ընկած հորենացին կարողացել է պահպանել թագավորների ճիշտ հերթագայությունը՝ աքեմենյան շրջանում հանդես եկած Հայաստանի սատրապ-թագավոր Արտաշես-Դարեհին տեղագրելով թե՛ Արտաշեսյան և թե՛ Երվանդունյան դինաստիաների ներկայացուցիչներից առաջ:

Այս բացահայտումը միաժամանակ ևս մեկ անգամ հաստատում է, որ Արշակ Մեծի և Վաղարշակի կերպարների տակ իրականում թաքնված են Կյուրոս Մեծն ու Թանաոքսարեսը, քանի որ նրանք տեղագրված են թե՛ արտաշեսյան, թե՛ երվանդունյան և թե՛ աքեմենյան շրջանի Հայաստանի թագավորներից կամ սատրապներից առաջ:

Այս և մյուս բացահայտումներից միաժամանակ նորից հետևում է, որ հորենացու «Հայոց Պատմության» անհավաստի ու անարժեք համարվող ներկայացված միջնամասը (Տիգրան Երվանդյանից մինչև հայ Արշակունիներ),

²² А. М. Дамдмаея. Политическая история Ахеменидской державы. М., 1985, с. 275.

²³ Տե՛ս Մ ո վ ս ե ս հ ո Ր Ե Ն Ի Ց Ի. Հայոց Պատմություն, Երևան, 1990, ներածություն, էջ 25—26:

²⁴ «Հանդես», № 1—2

որքան էլ մեծ շեղումների ու շփոթությունների է ենթարկվել, միևնույն է, հիմնված է պատմական հավաստի աղբյուրների վրա, այլ ոչ թե ժողովրդական խառնիխառն հիշողություններ» կամ ինքնահնար կեղծիքներ են, ինչպես որ հաճախ ենթադրվում է²⁴:

Խորենացու հիմնական շեղման բացահայտումով (որը Կյուրոս-Արշակ Մեծին և Թանաքսարես-Վաղարշակին մ. թ. ա. VI դարի փոխարեն մ. թ. ա. II դարում տեղադրելն է) լիովին հասկանալի է դառնում, թե ինչ ձևով է նա կառուցել իր պատմության խառնաշփոթված միջնամասը: Դրանով հնարավոր է դառնում ուղղակի տող առ տող վերծանել Խորենացու Պատմության մինչ այժմ անհասկանալի, անընդունելի ու անհավաստի համարվող հատվածները, որոնք պարունակում են հայ ժողովրդի հնագույն շրջանների խավարում գտնվող պատմությունը լուսավորող անգնահատելի և միանգամայն անսպասելի տեղեկություններ:

Հիմնական շեղման բացահայտումով պարզ է դառնում, որ պատմիչ Մար Աբաս Կատինան հանդես է եկել մ. թ. ա. VI դարում: Բացահայտվում է Մար Աբասյան աղբյուրի առեղծվածն ընդհանրապես: Ժողովրդական առասպելախառն ու կցկտուր հիշողությունների վրա հիմնված համարվող այս աղբյուրը հայագիտության համար ունի առեղծվածի և շրջադարձային նշանակություն, քանի որ նրան է պատկանում հայ ժողովրդի պատմության ամենամեծ հարցականի՝ հայ ժողովրդի կազմավորման առեղծվածի լուծման բանալին:

Այս ոչ մեծ հոգվածի սահմաններում հնարավոր չէ անդրադառնալ ոչ միայն շատ մանրամասների, այլև բաց մնացած էական շատ հարցերի: Իսկ որքան խորանում ենք ներկայացված նյութին առնչվող մանրամասների մեջ, այնքան հիմնավոր ու համոզիչ է դառնում ներկայացված տեսակետը: Տարբեր ժամանակներում Խորենացու քննադատների կողմից առաջադրած էական հարցադրումների հիմնական մասը առաջարկվող մոտեցմամբ ստանում է իր հիմնավորված և սպառիչ պատասխանները, որոնցից ամենաառաջնայինները ներկայացվեցին սույն հոդվածում:

Այդ հարցադրումներից շատերը հոգվածում ներկայացված բացահայտ և բազմակողմանի փաստարկների կողքին իրենց նշանակությամբ դառնում են արդեն ոչ այնքան էական, որովհետև ինքնըստինքյան ստանում են իրենց պատասխանները: Օրինակ, եթե Նինսի գրատան գոյությունը մ. թ. ա. II դարում իսկապես միանգամայն անհավանական է, ապա մ. թ. ա. VI դարում միանգամայն ընդունելի է:

Նույն կերպ հասկանալի է դառնում, որ Մար Աբասյան մատյանը իսկապես գրված է եղել քաղղեբերեն²⁵, այսինքն հին արամեերեն, որը մ. թ. ա. VIII դարից հանդիսացել է Ասորեստանի, իսկ մ. թ. ա. VI դարից՝ Աքեմենյան Պարսկաստանի միջադպրային գրավոր լեզուն: Ըստ ամենայնի հելլենիստական ժամանակաշրջանում Մար Աբասյան մատյանի մի մասը թարգմանվել է հունարեն, իսկ ավելի ուշ նրա մյուս մասը թարգմանվել է նոր արամեերեն, այսինքն ասորերեն և այդ վիճակով, այն է՝ ռուսերեն և ասորի գրերով²⁶ հասել է Խորենացուն:

Իր պատասխանն է գտնում նաև Ս. Գարազաշյանի հարցադրումը Վաղարշակի Պոնտական արշավանքի վերաբերյալ: Ի՞նչ պատերազմներ էր մղում Վաղարշակը Արշակ Մեծի կողմից արդեն նվաճված տարածքների խորքերում²⁷: Այս հարցի հստակ պատասխանը նույնպես ստացվում է, երբ այն դիտարկում ենք Աքեմենյանների պատմության պրիզմայով: Ըստ ականատես պատմիչ Քսենոփոնի, Աքեմենյան տերության նեոսում, հենց այն շրջաններում, որտեղ պատերազմներ է մղել Վաղարշակը, մի շարք լեռնային ցեղեր

24 Տե՛ս նույն աղբյուր, էջ 28—29 (Ս. Մալխասյանի ներածություն):

25 Տե՛ս Խորենացի, Ա—Բ:

26 Նույն տեղում:

27 Ա. Գարազաշյան. Քննական պատմություն Հայոց, Ա, էջ 236—237:

պահպանել են իրենց անկախությունը²⁸, Հենց այս շենթարկվող ցեղերի դեմ է եղել ուղղված Վաղարշակի հիշյալ արշավանքը:

Այստեղ անհրաժեշտ է խոսել նաև Մար Աբասյան աղբյուրի ծագումը մ. թ. III—IV դդ. հետ կապող, ամենից հավանական համարվող տեսակետի (Ն. Մառ, Ն. Ադոնց, Հ. Մանանդյան) մասին: Այս տեսակետը կարոտ է լրացուցիչ հիմնավորման: Նրա հիմնական կռվանը կապվում է Մար Աբաս կատինայի ասորական անվան հետ, որի «Մար» անվանական տերմինը, որպես ասորի հոգևոր առաջնորդների անվանական տիտղոս, համարվում է քրիստոնեական շրջանում ի հայտ եկած:

Նախ, չի կարելի համոզված պնդել, թե «Մար» անվանական տերմինը ասորիների կողմից ստեղծվել ու կիրառվել է հենց քրիստոնեական շրջանում և դրանից առաջ այն չի կիրառվել: Եթե դա նույնիսկ այդպես է, ապա հնարավոր է, որ ասորի քրիստոնյա թարգմանիչները ասորերեն են թարգմանել նաև Մար Աբասի անունը, ինչը հին և միջնադարյան աղբյուրներում հայտնի մոտեցում է: Բացի այդ, հնարավոր է նաև այսպիսի տարբերակ. «Մար» անվանական տերմինը վերաբերել է Մար Աբասի ազգային պատկանելությանը՝ մար-մարացի Աբաս: Նրան ասորի համարելը խորենացու տարբերակն է, որը այդ ևնթադրությանը հանգել է ելնելով Մար Աբասի մատյանի մեծ մասի ասորերեն զրգաթից, Մար Աբասի Մծբնացի լինելուց և հենց «Մար» անվանական տերմինի՝ ասորիների մեջ ընդունված լինելուց: Այս տարբերակի օգտին է խոսում այն, որ Սեբեոսի մոտ Մար Աբասի ծագումը չի նշված:

Բացառված չէ, որ նշված հանգամանքները հաշվի առնելով, Մար Աբասին ծագումով ասորի են ներկայացրել հենց ասորի թարգմանիչները:

Մար Աբասի մարական ծագումը շատ հավանական է, որովհետև Աբեմենյան տիրապետության մեջ առաջնային դիրք զբաղող մարերի ձեռքին է գտնվել մոգակաությունը, իսկ հայտնի է, որ հնում հոգևոր մշակույթն ու գիտությունը, այդ թվում պատմագրությունը, հանդիսացել է մոգերի ու քրմերի մենաշնորհը:

Հայագիտության մեջ Մար Աբասյան աղբյուրի ծագումը դեռևս առեղծվածային է: Ըստ ամենահավանական համարվող վարկածի (Ն. Մառ, Ն. Ադոնց, Հ. Մանանդյան), Մար Աբասը մեր թվարկության III—IV դդ. պատմիչ է, որը իր մատյանին հեղինակություն ու արժանահավատություն հաղորդելու նպատակով դիմել է կեղծիքի՝ ներկայանալով որպես մ. թ. ա. II դարի պատմիչ: Այսպիսով կեղծարարի պիտակից աղատվել է խորենացին, բայց այն Մար Աբասին փոխանցվելով միևնույն է, այս առեղծվածը համոզիչ լուծում չի ստացել: Բայց երբ ո՞չ խորենացուն և ո՞չ էլ Մար Աբասին կեղծարար չենք դիտում, ապա ներկայացված մոտեցմամբ բացահայտվում է ոչ միայն Մար Աբասի հանդես գալու ժամանակը, այլև հիմնավորված և համոզիչ պատասխաններ են ստանում մյուս էական հարցերը:

Մովսես խորենացու «Հայոց Պատմության» քննադատների տեսակետները կարելի է բաժանել չորս ուղղությունների: Առաջին երկուսը ծայրահեղական են՝ մեկը անվերապա ընդունում է խորենացու Պատմության հավաստիությունը (Չամչյան, Լ. Շահինյան), մյուսը հակառակը՝ այն համարում է անարժեք ու անհավաստի (Վ. Լակրոզ, Ֆր. Քաթրմեր, Ա. Գարտգաշյան, Ա. Գուտշմիդտ, Գր. խալաթյան):

Երրորդ ուղղությունը (Ն. Ադոնց, Մ. Աբեղյան, Ստ. Մախասյանց, Հ. Մանանդյան), գտնվելով խորենացու հավաստիությունը մերժող հուժկու ալիքի ճնշման տակ՝ խորենացու տեղեկությունները համարում է առասպելախառն պատմություններ, որոնց մեջ պահպանվել են պատմական հիշողություններ:

Չորրորդ ուղղությունը (Գ. Սարգսյան) խորենացուն համարում է միանգամայն հավաստի պատմիչ, այն առումով, որ նրա բոլոր հետևությունները,

28 Ք ո ս ն ո փ ո ն. Անաբասիս, գիրք է—25:

անկախ ճիշտ կամ սխալ լինելուց, որպես կանոն հիմնված են օբյեկտիվ տրված լալների վրա: Խորենացին իրենից ոչինչ չի հնարել ու չի կեղծել:

Հոգվածում ներկայացված տեսակետը համաձայն է վերջին ուղղությունը: Սրանում կարելի է համոզվել, եթե այս ուղղությունը զարգացնող Գ. Սարգսյանի հետևությունները համեմատենք հոգվածում ներկայացված օրինակների ու եզրակացությունների հետ: Ըստ Գ. Սարգսյանի խորենացին չի վերադարձվել պատմություն հորինելով, այլ միշտ հիմնվել է որևէ օբյեկտիվ տվյալի վրա²⁹:

Արշակ-Կյուրոս Մեծի, Վաղարշակ-Թանաքսարեսի, Արտաշես I—Դարեհ III Կողմանոսի կերպարների բացահայտումից հետոն է, որ խորենացին իսկապես ոչինչ չի հորինել և նրա հետևությունները իսկապես հիմնված են օբյեկտիվ, ընդ որում մեծ մասամբ միանգամայն հավաստի տվյալների վրա: Գ. Սարգսյանի մյուս հետևությունը այսպիսին է. «Խորենացու շեղումները կազմում են մի օրինաչափ սխտեմ, որը պայմանավորված է խորենացու ազդյունների բնույթով ու նրանց տվյալները մշակելու որոշակի մեթոդներով»³⁰:

Խորենացին Թանաքսարես-Վաղարշակին մ.թ.ա. VI դարի փոխարեն տեղագրելով չորս հարյուրամյակ հետո՝ մ.թ.ա. II դարում, կատարել է խոշոր շեղում և, բնականաբար, ընկել անելանելի հակասությունների մեջ: Բայց նա աներևակայելի, ուղղակի հանճարեղ հնարամտություն և հաստատակամություն ցուցաբերելով պատվով ու հաղթանակով է դուրս եկել այդ ծանր իրավիճակից: Այս խոշոր շեղման հետևանքով իր ափերից դուրս եկած և սակունովրա եղած Պատմության մեջ նա կարողացել է ճիշտ, հավաստի տեղավորել նվազագույն կորուստներով: Եվ նա մեզ է հասցրել ոչ միայն հավաստի, մեծարժեք, հազվագյուտ տեղեկություններ ու թվականներ. երբ բացում ենք նրա Պատմության բոլոր փակագծերը, բացահայտում նրա բոլոր քողարկված կերպարները, նրա խտացված ու միախառնված կերպարներն ու ժամանակները բաժանում ենք իրարից և տեղավորում իրենց ճիշտ տեղերում, ապա մեր առաջ հանում է մ.թ.ա. VI դարից մինչև մեր թվարկության V դարն ընկած հայոց պատմության որոշ չափով պակասավոր, միաժամանակ մեր պատմության շատ խավար էջեր լուսավորող, միանշանակ հավաստի պատմությունը, որում ներկայացված են և՛ Աքեմենյան Հայաստանի սատրապները, և՛ Երվանդունի թագավորները, և՛ Մափք-Կոմմադենի Երվանդունիները, և՛ Արտաշիսյանները, և՛ օտար դրածոները, և՛ հայ Արշակունիները և թե՛ նույնիսկ Սղեհիայի ասուրա-հայկական պետության Աբդարյան թագավորները:

Բացի հոգվածում ներկայացված Կյուրոս-Արշակ Մեծից և Դարեհ III-Արտաշես I-ից, խորենացին իրենց գործերով ներկայացրել է նաև Աքեմենյան այլ թագավորների, ավելին, նա նույնիսկ քողարկված ներկայացրել է Մարական աշխարհակալներ Կիաքսարին ու Աստիագես-Աթահակին (Արշակ Քաջ և Արտաշես):

Այս ամենը տեսնելն ու բացահայտելը հնարավոր է դառնում, որովհետև ինչպես մանրազնին ուսումնասիրությամբ բացահայտել է Գ. Սարգսյանը, խորենացու շեղումները կազմում են մի օրինաչափ սխտեմ: Հենց այս «սխտեմի» առկայությունը հնարավորություն տվեց բացահայտելու Արտաշես I—Դարեհ III-ին, ինչպես նաև խորենացու ներկայացրած բոլոր քողարկված կերպարները:

Գ. Սարգսյանի հաջորդ հետևությունը այսպիսին է. «Պետք է ընդգծել, սակայն, այն հմտությունը, որով խորենացին տարել է իր մշակումը, փոփոխությունները մտցնելով միայն ամենաանհրաժեշտ դեպքում և կատարելով

29 Գ. Սարգսյան. Աղբյուրների օգագործման եղանակը Մ. Խորենացու մոտ.—«Բանբեր Մատենադարանի», № 3, 1956, էջ 42:

30 Գ. Սարգսյան. Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» ժամանակագրական համակարգը. Երևան, 1965, էջ 137:

այդ փոփոխությունները նյութի սահմանափակ, ննարավորին չափ փոքր հատվածներում ու այսպիսով աշաղարտ պահելով իրեն հասած նյութի մեծադույն մասը³¹։

Այս հետևությունները հաստատող ակնառու օրինակ է խորենացու ներկայացրած Արշակ Մեծի «խտացված» կերպարը։ Նրանում պատմական հավաստի աղբյուրներին համապատասխանող Կյուրոս Մեծի գործերին համարյա առանց միջամտության՝ ուղղակի կցված են Միհրդատ II-ի գործերը, որը նույնպես համապատասխանում է հավաստի աղբյուրներին։ Այսինքն խորենացին սխալվել է միանգամայն տարբեր ժամանակներում հանդես եկած թագավորների գործերը նույնացնելով իրար, բայց իր ձեռքի տակ եղած նրանց վերաբերող նյութը մեզ է ավանդել համարյա «աշաղարտ» ձևով։ Նույն՝ բարձրակարգ պատմաբանին հատուկ մոռացմամբ է ստեղծել խորենացին նաև իր մյուս խտացված կերպարները (Վաղարշակ, Արտաշես I, Արշամ, Արդար, Ստնաարուկ, Ծովանդ Վերջին, Արտաշես II և այլն)։

խորենացուն ավելի շատ կարելի է մեղադրել ոչ թե միջամտությունների ու յրացումների, այլ ընդհակառակը՝ համառոտումների ու կրճատումների համար, որին նույնպես նա գնացել է «օրինաչափ սխտեմով»։ Ինչպես ասվեց, նա ստիպված է եղել մոտ 960-ամյա պատմությունը տեղավորել 560-ամյա ժամանակահատվածի մեջ, և այդ պատճառով դիմել է որոշ համառոտումների, կրճատումների, ինչպես նաև խտացված ու միախառնված կերպարների ու ժամանակների ստեղծմանը։ Բայց այս դեպքում նույնպես նա բանիմասց մոռացմամբ համառոտել է հիմնականում երկրորդական ու ոչ այնքան նշանակալից ժամանակներն ու գործիչներին, տեղ տալով հիմնականում նշանավոր ու առանցքային իրադարձություններին ու գործիչներին։

Գ. Սարգսյանի հաջորդ՝ ամփոփիչ հետևություններից մեկը այսպիսին է. «Հայոց Պատմության» դանձրը պտնվում են մեծ մասամբ ոչ թե շարադրանքի մակերևին, այլ նրա ընդերքում, ... այս բացառիկ սկզբնաղբյուրի մանրամասն հետազոտությունը դեռ պահանջում է նորանոր ջանքեր»³²։

Գ. Սարգսյանի այս և նախորդ եզրահանգումներից հետևում է, որ նա բավականին պարզ և ամբողջական ձևով է տեսել ու պատկերացրել Հայոց Պատմության «ընդերքը» և նրանում պարունակվող «գանձերը»։ Մեծ է զարմանալ, թե ինչու է նա այդ «գանձերը» մեզ ներկայացրել հիմնականում ընդհանուր գծերով, նրա մանրամասները թողնելով ապագային։ Թերևս այս հարցում խորենացիագետ Գ. Սարգսյանին կաշկանդել է ուրարտագետ Գ. Սարգսյանը։

«Հայոց Պատմության» հարուստ և հազվագյուտ Գանձարանի բացահայտումով մեր առջև է կանգնում ոչ միայն խոշորագույն պատմաբան ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻՆ, այլև նրանից շատ ավելի վաղ հանդես եկած հայ պատմագրության մեկ այլ մեծություն՝ պատմիչ ՄԱՐ ԱՐԱՍ ԿԱՏԻՆԱՆ, որը դեռևս մ. թ. ա. VI դարի կեսերին, ինչպես հետագայում խորենացին, դրել է հայոց ամբողջական պատմություն՝ «սկզբից» մինչև իր՝ պատմիչի ժամանակները։ Իր արժանի գնահատականին սպասող Մար Աբասյան աղբյուրի արժեքը պատկերացնելու համար բավական է ասել, որ նրանում տեղ է գտել Արգիշտի I-ի խոփոխության տարեգրության տարբերակը։ Բացի այդ, նրանում տեղ է գտել մեծարժեք և սենսացիոն հաղորդադրությունների այնպիսի մի ամբողջություն, որը շրջադարձային նշանակություն ունի ոչ միայն հայ ժողովրդի հնագույն շրջանի պատմության, այլև հին աշխարհի պատմության առանցքային հարցերի լուսաբանման գործում։ Այս առումով անտիկ պատմագրության առաջին մեծությունների կողքին հանձինս Մար Աբասի ի հայտ է գալիս մի նոր անուն։

31 Տե՛ս նույն տեղում, էջ 136։

32 Տե՛ս նույն տեղում, էջ 5։

ПРОИСХОЖДЕНИЕ МАР АБАССКОГО ИСТОЧНИКА
И «ИСТОРИЯ АРМЕНИИ» МОВСЕСА ХОРЕНАЦИ

М. С. ОГАНЯН

Резюме

Критиками «Истории Армении» Мовсеса Хоренаци давно замечено, что в отдельных случаях Хоренаци некоторые данные, относящиеся к Ахеменидскому периоду, ошибочно приписывал Парфянским временам. Из новейшего исследования «Истории» Хоренаци следует, что он не только в отдельных случаях, но и в целом, путая имеющиеся под рукой уникальные источники, относящиеся ко всему Ахеменидскому периоду, приписывал их парфянам и подгонял к парфянским временам. Структурный анализ книг А и В «Истории Армении», отображенных в них событий, числовых и именных данных, прямые сравнения с достоверными источниками приводят к выводу, что автор основного источника данных книг—историк Мар Абас Катпна свою «Историю» написал во второй половине VI в. до н. э., во времена основания Киром Великим Ахеменидского господства. Этими выявлениями темные и загадочные отрывки «Истории Армении» Мовсеса Хоренаци проясняются почти целиком. Становится возможным не только подробно показать, где ошибался Хоренаци, какого царя или какое событие с кем или с чем он спутал, но и сказать, почему он ошибся.